



Ալիշան. Է. Պ. Ավետիս. Alischan.



### Հ. ՂԵԽՈՆԴ ԱԽԹԱՆ

Հայոց պատմա-հնագիտական զբականութիւնը անդառ նա-  
ի կորուստ կրեց: 1901 թուի նոյեմբերի 8-ին (21-ին  
ն. տ) իսրին ծերութեան մէջ վախճանուեց Վենետիկի Ս.  
Ղազարի վանքում չ. Ղևոնդ Ալիշանը, Մխիթարեան միա-  
բանութեան, այլ և բոլոր հայերէս պարծանքն ու սիրելին:  
Վախճանուեց առանց փոխարինող լոջորդ թողնելու, և այս  
է ամենածանր հանգամանքը, որ մեզ չէ թողնում հաշտուե-  
լու այն մտքի հետ, թէ մկայ ալիս Ալիշանը: Նրա զերեկ-  
մանի առաջ մենք նոյնն ենք զգում, նոյնը պէտք է իրիննք՝  
ինչ որ դդացել և առել է Քերթողահայրը իւր մեծ վարդա-  
պետների գերազանի վրայ ողբայիս-«Ընդ Քրիստոսի յաւ է  
նմա ըննկել, և ըլքամամեանն հանդչել զուս, և դրեշտա-  
կացն տեսանել պարաւըրութիւնս: Բայց եղիելիք մեք՝ որ զըր-  
կեցաք ի հայրենի վերակացութենէն»:

Ընդհանուր հայ ազգը սղաց այս անփոխարինելի կորուստը,  
առանց կրօնի խորութեան, առանց կուսակցական զանազա-  
նութեան: Բայց «Ազգաղբական Հանդէսու» աւելի մօտ է զգում  
այդ կորուստը, քանի որ Ալիշանը ամենից մեծ հեղինակու-  
թիւնը, ամենից արդիւնաւոր աշխատողն է եղել Հայոց աղ-  
դագրութեան վերաբերեալ բոլոր ճիշդերում: Նա ոչ միայն բա-  
նաստեղծութեան մէջ նահապետ եղաւ, այլ և ազգաղբութեան  
մէջ: Նրա Ձիրակը, Սիառանը, Այրարատը, Սիւնիքը, Հայոց  
հին հաւատքը, Հայրուսակը հարուստ մթերանոցներ են, որոնց  
մէջ Համբարուած են հայ աղդագրութեան վերաբերեալ անհոն  
քանակութեամբ նիւթեր:

Այս պատմաւոլ «Ազգաղբական Հանդէսոն» և իւր խորին  
ցաւակցութիւնն է յարտնում Մեծ ծերունիի մահուան առիթով,  
խոստանալով առաջիկայ համարներում ծանօթացնել իւր ըն-  
թերցողներին, թէ ինչ ծառաւորութիւններ է մատուցել Պ. Ա-  
լիշանը առ անձնապէս հայ աղդաղբաթեան: